

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՍՊԸ
հիմնադրի Հոգաբարձուների խորհրդի
22.03.2010թ. թիվ 1 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում

ՓՈՓՈԽՎԱԾ Է
<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՍՊԸ հիմնադրի
Հոգաբարձուների խորհրդի
01.12.2010թ. որոշմամբ

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի
30.01.2012թ. թիվ 25 որոշմամբ

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի
23.03.2012թ. թիվ 2 որոշմամբ

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի
28.03.2013թ. որոշմամբ
(Արձանագրություն թիվ 03)

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի
06.05.2014թ. որոշմամբ
(Արձանագրություն թիվ 04)

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի
31.10.2014թ. որոշմամբ
(Արձանագրություն թիվ 06)

<ԿԱՍՈՒՐՁ> ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի
04.08.2016թ. որոշմամբ
(Արձանագրություն թիվ 03)

Ժողովի նախագահ՝

(իրավասու անձի պաշտոնը)

Վարդան Արամյան

(ստորագրություն)



ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՓՈԽՎԱԾ)

<ԿԱՍՈՒՐՁ> ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերության

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ԿԱՍՈՒՐՋ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է «Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ի (գրանցման համար՝ 222.160.00352, վկայական՝ թիվ 03Ա 065337) կողմից իր Հոգաբարձուների խորհրդի 2010թ. մարտի 22-ի որոշմամբ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպիչական կարգավիճակով: Հիմնադրի Հոգաբարձուների խորհրդի 2012թ. հունվարի 30-ի որոշմամբ Ընկերությունը վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության:

1.2 Ընկերության հիմնադիր և միակ բաժնետեր է հանդիսանում «Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ը (գրանցման համար 222.160.00352, վկայական թիվ 03Ա 065337, այսուհետ՝ Հիմնադիր):

1.3 Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված քանակի բաժնետոմսերի:

1.4 Ընկերության իրավունակությունը ծագում է ՀՀ Կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցման պահից և դադարում լուծարման վերաբերյալ պետական գրանցամատյանում գրառման պահից:

1.5 Ընկերությունն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության համար սահմանված գործունեություն՝ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեության լիցենզիա ստանալու պահից:

1.6 Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Հիմնադրի (Բաժնետերերի ընդհանուր ժողովի), Տնօրենների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ), Գործադիր մարմնի, Վերստուգողի, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների համար:

1.7 Ընկերությունն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում: Հիմնադրի կողմից Ընկերության կանոնադրական կապիտալում ներդրված գույքը, ինչպես նաև Ընկերության կողմից իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը Ընկերության սեփականությունն է: Ընկերությունը և Հիմնադիրը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար, եթե այդպիսիք չեն ստանձնել օրենքով նշված հանգամանքների ծագմամբ կամ գործարքով:

1.8 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

1.9 Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքով (այսուհետ՝ Օրենք), այլ օրենքներով և իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ:

1.10 Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.11 Ընկերությունը երաշխավորում է իր հաճախորդների՝ բանկային, առևտրային և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.12 Վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելիս Ընկերության օրինական տիրապետման և օգտագործման ներքո գտնվող գործընկերների և հաճախորդների դրամական միջոցների և այլ գույքի վրա կալանք կարող է դրվել, առգրավում կատարվել կամ բռնագանձում տարածվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ իրավասու մարմինների կողմից: Նման դեպքերում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով կալանքի, առգրավման կամ բռնագանձման հետևանքով իր գործընկերներին և հաճախորդներին պատճառված վնասի համար:

1.13 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.14 Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

1.15 Ընկերությունը կրում է ՀՀ օրենսդրությամբ Ընկերությանը վերապահված իրավունքներ և պարտականություններ:

1.16 Ընկերությունն ունի օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում, խորհրդանիշ, իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանշով կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ դրոշմներ, ձևաթղթեր, անկյունային դրոշմակնիք, առանձնացված ստորաբաժանումների համարային կնիքներ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացման այլ վավերապայմաններ:

1.17 Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԿԱՄՈՒՐՋ» ունիվերսալ վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերություն,

անգլերեն՝ “KAMURJ” universal credit organization closed joint-stock company, ռուսերեն՝
“КАМУРДЖ” универсальная кредитная организация
закрытое акционерное общество:

1.18 Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝ հայերեն՝ «ԿԱՄՈՒՐՋ» ՈւՎԿ ՓԲԸ,

անգլերեն՝ “KAMURJ” UCO CJSC,

ռուսերեն՝ “КАМУРДЖ” УКО ЗАО:

1.19 Ընկերության գտնվելու վայրն է (հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Սեբաստիա փող. 123:

2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1 Ընկերությունն իրավունք ունի Օրենսգրքին, Օրենքին, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել (հիմնադրել) առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաձյուղեր և ներկայացուցչություններ:

2.2 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության խորհրդի կողմից:

2.3 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների գույքը տրամադրում է Ընկերությունը: Առանձնացված ստորաբաժանումների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում:

2.4 Ընկերության առանձնացված ստորաբաժանումները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.5 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են այդ ստորաբաժանումների կանոնադրությունների և Ընկերության կողմից տրված լիազորագրերի հիման վրա:

2.6 Ընկերության առանձնացված ստորաբաժանումները գործում են Ընկերության անունից:

2.7 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների գործունեության համար պատասխանատվություն է կրում Ընկերությունը:

3 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

3.1 Ընկերության գործունեության նպատակն է շահույթի ստացումը ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար սահմանված գործունեության իրականացման միջոցով:

3.2 Ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները:

3.3 Ընկերությունը կարող է կնքել ցանկացած քաղաքացիաիրավական գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեության և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

3.4 Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային, ապահովագրական կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:

3.5 Ընկերությունն ինքն է որոշում ներգրավվող վարկերի, փոխառությունների, տրամադրվող վարկերի և փոխառությունների, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները և միջնորդավճարները, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

3.6 Ընկերության և հաճախորդների միջև փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ ու կողմերի միջև կնքված պայմանագրերով:

3.7 Ընկերությունը կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

3.7.1 իր բաժնետերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից, իրավաբանական անձանցից ներգրավել փոխառություններ և (կամ) նրանց հետ կնքել նմանատիպ գործարքներ,

3.7.2 տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

3.7.3 տրամադրել երաշխիքներ,

3.7.4 թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ,

3.7.5 մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

3.7.6 մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային կառավարում,

3.7.7 պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

3.7.8 գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ և նման այլ գործարքներ,

3.7.9 իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

3.7.10 գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային ձուլակտորներ և մետաղադրամ,

3.7.11 ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

3.7.12 մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

3.7.13 ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,

3.7.14 իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն,

3.7.15 Կենտրոնական Բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

3.8 Ընկերությունը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

3.9 Ֆինանսական գործառնություններն Ընկերությունը իրականացնում է կանխիկ և անկանխիկ ձևով: Համապատասխան անկանխիկ հաշվարկները իրականացվում են Ընկերությունը սպասարկող բանկերի միջոցով:

3.10 Ընկերությունն իր Հիմնադրի կամ հաճախորդների համար չի կարող բացել և վարել բանկային հաշիվներ:

3.11 Ընկերությունն իր հաճախորդների հետ կարող է իրականացնել ինչպես ձեռնարկատիրական, այնպես էլ սպառողական բնույթի ակտիվային գործառնություններ (վարկեր, փոխառություններ, ֆակտորինգ, լիզինգ և այլն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.12 Ընկերությունը կարող է հրապարակային օֆերտաների միջոցով ներգրավել փոխառություններ:

3.13 Օրենքի IX գլխով նախատեսված շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը Ընկերության կողմից չի կիրառվում:

4 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖՈՆԴԵՐԸ

4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

4.3 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ:

4.4 Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 20,000 (քսան հազար) հատ սովորական բաժնետոմսերի (տեղաբաշխված բաժնետոմսեր), յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

4.5 Ընկերությունը կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով լրացուցիչ կարող է տեղաբաշխել ևս 100,000 (մեկ հարյուր հազար) հատ 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր (հայտարարված բաժնետոմսեր):

4.6 Ընկերությունը կարող է բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ ժողով) որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի, ինչպես նաև հայտարարված բաժնետոմսերի չափը:

4.7 Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը: Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը իրականացնում է փակ եղանակով:

4.8 Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են միայն ՀՀ դրամով:

4.9 Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունը կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

4.10 Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

4.10.1 շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,

4.10.2 Ընկերության զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

4.11 Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.12 Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է իրականացվել ՀՀ

օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգում:

4.13 Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

4.14 Ընկերությունը ստեղծում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որը ձևավորվում է զուտ շահույթի հաշվին: Մինչև գլխավոր պահուստի լրիվ համալրումը տարեկան զուտ շահույթից գլխավոր պահուստին մասհանումների նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ տարվա տարեկան զուտ շահույթի 5 (հինգ) տոկոսից:

4.15 Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

4.16 Ընկերության կողմից կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստելու Ընկերության հետագա զարգացմանը և նրա աշխատակիցների սոցիալ- տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

5 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՐՈՒԹՅՈՒՆ

5.1 Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր եւ պարտատոմսեր: Ընդ որում, բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

5.2 Բաժնետոմսերի հավաստագիրն անվանական արժեթուղթ է, որը հավաստում է Ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը: Բաժնետիրոջը տրվում են առանձին հավաստագրեր՝ հասարակ և արտոնյալ բաժնետոմսերի առանձին տեսակների համար: Հավաստագրերը տրվում են բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո: Բաժնետոմսերի հավաստագիր տալու, այն փոխարինելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանվում է օրենքով և այլ իրավական ակտերով: Հավաստագիրը պետք է համապատասխանի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

5.3 Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:

5.4 Ընկերությունը կարող է թողարկել հասարակ, ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը:

5.5 Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը Ընկերության կողմից հանձնվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Ընկերության հետ փոխկապակցված անձ չհամարվող մասնագիտացված կազմակերպության, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր:

6 ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Հասարակ բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝

6.1.1 մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

6.1.2 մասնակցել Ընկերության կառավարմանը,

6.1.3 ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

6.1.4 առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,

6.1.5 ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության գործունեությանը,

6.1.6 ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

6.1.7 հանդես գալ առաջարկություններով ժողովներում,

6.1.8 ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

6.1.9 դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

6.1.10 Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

6.1.11 ունենալ սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

6.2 Հասարակ բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.3 Հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է Խորհուրդը:

6.4 Ընկերության բաժնետերերը պարտավոր են կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված պահանջները:

7 ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

7.1 Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

7.2 Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

7.3 Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

7.4 Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

7.5 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

7.6 Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերությանն արգելվում է որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին:

8 ԺՈՂՈՎ

8.1 Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

8.2 Ժողովի որոշումները ընդունվում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր հանդիսացող իրավաբանական անձի կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

8.3 Տարեկան ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

8.4 Ժողովի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկության կարգով, բացառությամբ Օրենքով արգելված դեպքերի:

8.5 Ժողովի իրավասությանն են պատկանում՝

8.5.1 Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

8.5.2 Ընկերության վերակազմակերպումը,

8.5.3 Ընկերության լուծարումը,

8.5.4 Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

8.5.5 Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, լիազորությունների ժամկետի սահմանումը, Խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, վերջիններիս նկատմամբ խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդի նոր անդամը նշանակվում է ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով, եթե այդ ժամկետը ավել է 1 (մեկ) տարուց: Եթե Խորհրդի ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետը պակաս է 1 (մեկ) տարուց, ապա Խորհրդի նոր անդամը նշանակվում է ժողովի որոշմամբ որոշված ժամկետով, սակայն ոչ պակաս քան 1 (մեկ) տարի ժամկետով,

8.5.6 հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

8.5.7 բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով (հայտարարված բաժնետոմսերի սահմաններում) կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

8.5.8 բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

8.5.9 Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:

8.5.10 Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրությունը և նրա (նրանց) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը: Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրության հարցն

արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

8.5.11 Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

8.5.12 Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

8.5.13 Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

8.5.14 Ժողովի վարման կարգի հաստատումը,

8.5.15 Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

8.5.16 բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

8.5.17 գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում,

8.5.18 Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետզնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

8.5.19 Խորհրդի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) գործունեության կանոնակարգի, ինչպես նաև Ընկերության այլ ներքին իրավական ակտերի հաստատումը, որոնք ՀՀ օրենսդրությամբ վերապահվել են ժողովի իրավասությանը,

8.5.20 Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

8.6 Ժողովի՝ Օրենքով սահմանված բացառիկ իրավասությունները չեն կարող նրա կողմից փոխանցվել այլ մարմնի, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով: Օրենքով թույլատրված դեպքերում ժողովի բացառիկ չհամարվող իրավասությունները կարող են ժողովի որոշմամբ փոխանցվել Ընկերության Խորհրդին:

8.7 Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

8.8 Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

8.9 Ժողովի վարման կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

8.10 Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

8.11 Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

8.11.1 Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

8.11.2 Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

8.11.3 Ընկերության վերստուգողը (վերստուգող հանձնաժողովի անդամները),

8.11.4 Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում),

8.11.5 ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

8.12 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի: Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

8.13 Սույն Կանոնադրության 8.11. կետում նշված անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով, ժողովի նիստից առնվազն 2 օր առաջ:

8.14 Ժողովի մասին ծանուցման բովանդակությունը, ինչպես նաև ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը սահմանվում են Օրենքով:

8.15 Ընկերության բաժնետերը, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

8.16 Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն Կանոնադրության 8.15 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում:

8.17 Արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

8.18 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում Խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

8.19 Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում Խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք: Նշված դեպքերում արտահերթ ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու ժողովի գումարման հետ կապված

ծախսերը՝ Ընկերության միջոցների հաշվին:

8.20 Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի, պահպանելով այդ իրավաբանական անձի կանոնադրության պահանջները:

8.21 Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

8.22 Քվեարկությունը ժողովում իրականացվում է "Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով:

8.23 Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Եթե ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ իրավաբանական անձ, ապա ժողովը նախագահում է այդ իրավաբանական անձի բարձրագույն կառավարման մարմնի նախագահը:

9 ԽՈՐՀՈՒՐԴ

9.1 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

9.2 Խորհրդի անդամ կարող են նշանակվել չափահաս և գործունակ այն ՀՀ և (կամ) օտարերկրյա քաղաքացիները, որոնք բավարարում են Խորհրդի անդամի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Խորհրդի անդամները, որպես ֆիզիկական անձինք, չեն կարող միմյանց հետ փոխկապակցված լինել:

9.3 Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

9.3.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, այդ թվում՝ Ընկերության ամենամյա բիզնես պլանի և հեռանկարային զարգացման ծրագրերի հաստատումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը,

9.3.2 տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ժողովի հաստատմանը ներկայացնելը, Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) գործունեության արդյունքների նախնական քննարկումը, ժողովին առաջարկություններ ներկայացնելու համար,

9.3.3 Ընկերության տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի), ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանած այլ անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը, նրանց կողմից սահմանված կարգով ստացված հաշվետվությունների քննարկումը,

9.3.4 Ընկերության տնօրենին և Վերստուգող հանձնաժողովին (Վերստուգողին) հանձնարարականների տրամադրումը,

9.3.5 Օրենքի, սույն կանոնադրության, իրավական այլ ակտերի կամ պայմանագրի պահանջները, ինչպես նաև ժողովի և (կամ) Խորհրդի կողմից տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (աշխատանքային կարգապահությունը խախտելու) դեպքում Ընկերության տնօրենից, Վերստուգող հանձնաժողովի նախագահից, անդամներից (Վերստուգողից) կարգապահության խախտման մասին գրավոր բացատրության պահանջումը, նրանց նկատմամբ կարգապահական տույժերի (բացառությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգապահական տույժի) կիրառումը, ինչպես նաև նյութական պատասխանատվության կիրառումը: Սույն կետում նշված աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում, որպես

կարգապահական տույժ, Ընկերության տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի նախագահի, անդամների (Վերստուգողի) հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավասությունը պատկանում է ժողովին,

9.3.6 Ընկերության տնօրենի և վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) հետ աշխատանքային հարաբերություններում (մասնավորապես՝ գործուղման ուղարկելու, արձակուրդ տրամադրելու, հանձնարարականներ տալու, եռամսյակային և կիսամսյակային հաշվետվություններ ընդունելու հետ կապված և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում ու հարաբերություններում) որպես գործատուի ներկայացուցիչ հանդես գալը, բացառությամբ ժողովի իրավասությանը վերաբերող այն հարցերի, որոնք սույն կանոնադրությամբ, վերապահված են բացառապես ժողովին,

9.3.7 Ընկերության տնօրենի տեղակալների, գլխավոր հաշվապահի հետ աշխատանքային հարաբերություններում գործատուի միակ ներկայացուցիչ հանդես գալը (աշխատանքի ընդունման, աշխատանքային պայմանագրի լուծման, աշխատանքի վարձատրության պայմանների որոշման հարցերով), ինչպես նաև վերջիններիս գործառույթների և լիազորությունների սահմանումը համաձայն Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի: Սույն կետում նշված հարցերով Ընկերության հիշատակված աշխատողների հետ աշխատանքային հարաբերություններում աշխատանքային պայմանագրերը, համաձայնագրերն ու այլ փաստաթղթերն Խորհրդի համապատասխան որոշման հիման վրա ստորագրում է Խորհրդի նախագահը՝ որպես գործատուի ներկայացուցիչ,

9.3.8 Ընկերությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, ժողովի և Խորհրդի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

9.3.9 աուդիտորական և այլ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված միջաջառումների պլանի հաստատումը և նրա իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

9.3.10 տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

9.3.11 ժողովների օրակարգի հաստատումը,

9.3.12 ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը,

9.3.13 Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի "բ", "ժգ", "ժգ", "ժէ-ի" ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը,

9.3.14 պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, դրանց տեղաբաշխման և մարման կարգի և պայմանների սահմանումը,

9.3.15 գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով,

9.3.16 Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

9.3.17 Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

9.3.18 Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

9.3.19 Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը և ներկայացումը,

9.3.20 Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

9.3.21 Ընկերության հիմնադրամների (բացառությամբ պահուստային հիմնադրամի) ստեղծումը,

9.3.22 Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

9.3.23 Ընկերության բոլոր ներքին իրավական ակտերի (անձնակազմի կառավարմանը, ֆինանսական գործառնությունների իրականացմանը, ծախսերի կատարմանը և այլնին առնչվող քաղաքականություններ, կանոնակարգեր, կարգեր, ընթացակարգեր, հրահանգներ, ուղեցույցներ և այլն) ընդունումը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ ժողովի ընդունմանը վերապահված ակտերի:

9.3.24 Ընկերության մասնաձյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, դրանց, ինչպես նաև ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների, կանոնակարգերի, հաստիքացուցակների (ըստ պաշտոնների և աշխատավարձերի նվազագույն և առավելագույն սահմանաչափերի) հաստատումը, նրանց միջև ֆունկցիոնալ գործառնությունների և լիազորությունների սահմանումը,

9.3.25 դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ մասնակցությունը, հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը, մասնակցությունը,

9.3.26 այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

9.3.27 Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքմանը համաձայնություն տալը՝ Օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,

9.3.28 Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

9.3.29 ամենամյա վարչատնտեսական ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

9.3.30 ամենամյա կապիտալ ներդրումների նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

9.3.31 Ընկերության հաստիքացուցակի, այդ թվում աշխատավարձերի նվազագույն և առավելագույն չափերի, ինչպես նաև պարգևավճարների և խրախուսումների կարգի և պայմանների հաստատումը,

9.3.32 խորհրդի նախագահի ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

9.3.33 Ընկերության պարտապանների պարտավորությունների նկատմամբ տոկոսների և/կամ տույժերի հաշվեգրման մասնակի կամ ամբողջությամբ դադարեցման, պարտավորությունների կատարման ժամկետների վերանայման, պարտավորությունների ամբողջական կամ մասնակի ներման, հրաժարագնի վերաբերյալ որոշումների ընդունումը, ինչպես նաև նվիրատվությունների և (կամ) նվիրաբերության հարցերով որոշումների ընդունումը

9.3.34 Ընկերության ամենամյա արտաքին աուդիտի հաշվետվության քննարկումը և որոշումների ընդունումը,

9.3.35 ամենամյա բիզնես-պլանի կատարման, ինչպես նաև աուդիտորական և այլ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման պլանների վերաբերյալ տնօրենի եռամսյակային հաշվետվության քննարկումը և քննարկման արդյունքներով որոշումների ընդունումը,

9.3.36 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում վարկերի տոկոսադրույքների, կոմիսիոն վճարների, սակագների սահմանումը, սահմանված սակագներից տարբերվող արտոնյալ սակագների կիրառմանը համաձայնության տրամադրումը,

9.3.37 Ընկերությանը սպասարկող բանկերի ցանկի հաստատումը, բանկային հաշիվներով և Ընկերության դրամարկղերով գործառնությունների իրականացման լիազորված անձանց ցանկի հաստատումը,

9.3.38 Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված և ՀՀ օրենսդրությանը չհակասող իրավասությունների իրականացումը,

9.3.39 Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

9.4 Կանոնադրության 9.3.35 և 11.5 կետերում նշված տնօրենի և գլխավոր հաշվապահի եռամսյակային հաշվետվությունները քննարկվում են յուրաքանչյուր եռամսյակի ավարտից 35

օրացուցային օրվա ընթացքում, տնօրենի և գլխավոր հաշվապահի պարտադիր ներկայությամբ:
Հաշվետվությունների ձևերը և բովանդակությունը հաստատում է Խորհուրդը:

9.5 Խորհրդի օրենքով բացառիկ համարվող իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

9.6 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

9.7 Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

9.8 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տաս և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչին:

9.9 Խորհուրդը բաղկացած է առնվազն 3 (երեք), իսկ առավելագույնը 5 (հինգ) անդամներից:

9.10 Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները, Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

9.11 Խորհրդի նախագահը՝

9.11.1 կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

9.11.2 գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք,

9.11.3 կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:

9.12 Խորհուրդն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ քան 2 ամիսը մեկ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև էլեկտրոնային, հեռախոսային, հեռուստացուցային կամ այլ կապի միջոցներով իրական ժամանակի մեջ հաղորդակցվելու միջոցով, ինչպես նաև հեռակա (հարցման) կարգով, բացառությամբ այն հարցերի, որոնք չեն կարող քննարկվել հեռակա կարգով: Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Խորհրդի կանոնակարգով:

9.13 Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, Խորհրդի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է Խորհրդի անցկացման վայրի, ժամանակի մասին, ծանուցման հետ մեկտեղ ներկայացնելով օրակարգի հարցերին առնչվող նյութերը: Խորհրդի անդամներն իրավունք ունեն ներկայացնել առաջարկներ Խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ: Խորհրդի անդամը նիստից բացակայելու դեպքում մինչև Խորհրդի նիստի անցկացման օրը պարտավոր է այդ մասին հայտնել Խորհրդի նախագահին, նշելով պատճառները:

9.14 Խորհուրդն ունի քվորում, եթե նիստին ներկա են Խորհրդի առնվազն 3 անդամներ: Խորհրդի նիստը բացում է Խորհրդի նախագահը կամ նրան փոխարինող անձը, որի առաջարկով էլ հաստատվում է Խորհրդի նիստի օրակարգը:

9.15 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունների կատարումը Խորհրդի որոշմամբ դրվում է Խորհրդի անդամներից մեկի վրա:

9.16 Խորհրդի նիստերին, որպես կանոն, մասնակցում է տնօրենը՝ Խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի կամ տնօրենի առաջարկով Խորհրդի նիստերին կարող են հրավիրվել նաև Ընկերության այլ աշխատակիցներ:

9.17 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների

մեծամասնությամբ, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

9.18 Եթե Խորհրդի նիստը անց է կացվում հեռակա քվեարկության միջոցով, ապա Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, Խորհրդի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է Խորհրդի անցկացման վայրի, ժամանակի մասին, ծանուցման հետ մեկտեղ ներկայացնելով օրակարգի հարցերին առնչվող նյութերը և հեռակա քվեարկության քվեաթերթիկը: Խորհրդի անդամները հեռակա քվեարկության քվեաթերթիկի համախառնասխան վանդակներում կատարում են “Կողմ”, “Դեմ” կամ “Չեռնպահ” նշումներ, ստորագրում են քվեաթերթիկները և պատվիրված նամակով ուղարկում են Ընկերության իրավաբանական հասցեով կամ առձեռն հանձնում են Ընկերության պատասխանատու աշխատակցին:

9.19 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում արտացոլվող տեղեկությունների բովանդակությունը և ձևը սահմանվում են Օրենքով: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.20 Խորհրդի նիստերը հեռակա կարգով անցկացվելու դեպքում Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, քվեարկված քվեաթերթիկները ստանալուց հետո 5 օրյա ժամկետում դրանց հիման վրա կազմում և ստորագրում է արձանագրությունը՝ կցելով քվեաթերթիկները: Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

10.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

10.2 Տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն Կանոնադրությամբ ժողովի և Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

10.3 Տնօրենը կազմակերպում է Ընկերության ընթացիկ գործունեությունը և ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

10.4 Տնօրենը՝

10.4.1 Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,

10.4.2 ապահովում է Խորհրդի կողմից հաստատված ամենամյա բիզնես ծրագրի և հեռանկարային զարգացման պլանների կատարումը,

10.4.3 հաստատում է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ներքին աշխատանքային պլանները,

10.4.4 օպերատիվ կերպով վերացնում է աուդիտորական և այլ ստուգումների արդյունքներով կամ այլ հանգամանքներում ի հայտ եկած օրենսդրության խախտումները և թերացումները, դրանց մասին տեղեկատվություն տրամադրելով Խորհրդին,

10.4.5 ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

10.4.6 գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

10.4.7 ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին ակտերով

սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

10.4.8 Խորհրդի կողմից որոշված բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

10.4.9 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին իրավական ակտերը,

10.4.10 Ընկերության սույն կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10.4.11 Սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերության աշխատողների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ (աշխատանքի ընդունման, աշխատանքային պայմանագրի լուծման, աշխատանքի վարձատրության պայմանների որոշման, խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման, գործուղումների ուղարկման, արձակուրդների տրամադրման, հաշվետվությունների և բացատրությունների ընդունման և այլ հարցերով), բացառությամբ այն աշխատողների, որոնց հետ աշխատանքային հարաբերություններում գործատուի ներկայացուցչի իրավասությունները սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովին, Խորհրդին/Խորհրդի նախագահին:

10.5 Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

10.6 Ընկերության տնօրենը անմիջական պատասխանատվություն է կրում Ընկերության ամենամյա բիզնես պլանի և հեռանկարային զարգացման ծրագրերի կատարման համար:

11 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԸ

11.1 Ընկերության գլխավոր հաշվապահին իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

11.2 Ընկերության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ստորաբաժանման կանոնակարգով:

11.3 Ընկերության Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել տնօրենին կամ այլ անձի:

11.4 Ընկերության գլխավոր հաշվապահին առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն:

11.5 Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների արժանահավատության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

12 ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

12.1 Ընկերությունը կարող է ունենալ Վերստուգող հանձնաժողով, այդ թվում Հանձնաժողովի նախագահ և անդամներ, կամ Վերստուգող, որոնք ընտրվում են ժողովի կողմից՝ 3 (երեք) տարի ժամկետով և հաշվետու են ժողովին և Խորհրդին:

12.2 Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) կատարում է հետևյալ գործառույթները.

12.2.1 հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը,

12.2.2 հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացող գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

12.2.3 հսկողություն է իրականացնում Ընկերության տնօրենի, տնօրենի տեղակալների, գլխավոր հաշվապահի, տարածքային (առանձնացված) և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի, տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

12.2.4 եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Ընկերության Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,

12.2.5 իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

12.2.6 պարտադիր կարգով անց է կացնում Ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ մինչև դրանց հաստատումը ժողովի կողմից,

12.2.7 իրականացնում է Օրենքով և (կամ) ժողովի կողմից սահմանած այլ գործառույթներ:

12.3 Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) պարտավոր է կատարել ժողովի և Խորհրդի հանձնարարականները: Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) աշխատանքի կարգը սահմանում է ժողովը: Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) հետ հարաբերություններում ժողովին և Խորհրդին կարող են տրվել նմանատիպ իրավասություններ, եթե Օրենքով դրանք ժողովի կամ Խորհրդի բացառիկ իրավասությունները չեն:

13 ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ

13.1 Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և իր կողմից սահմանած կարգով:

13.2 Կենտրոնական բանկը Ընկերության ստուգումներն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերով, դեպքերում և կարգով:

14 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

14.1 Յուրաքանչյուր տարի Ընկերության գործունեությունը ստուգվում է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, որին հաստատում է Ընկերության ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը:

14.2 Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը Ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

15 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.1 Ընկերության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

15.2 Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում՝ վերջինիս կողմից սահմանված պարբերականությամբ, ձևերով և կարգով:

15.3 Ընկերության հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրությամբ նախատեսված կանոններին և սկզբունքներին համապատասխան:

15.4 Ընկերությունը կազմում և հրապարակում է տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի և ՀՀ Կառավարության լիազորված մարմնի կողմից համաձայնեցված կարգով:

15.5 Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը:

15.6 Ընկերությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

15.7 Ընկերությունը պարբերաբար հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և հաճախականությամբ:

16 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16.1 Ընկերության գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

16.2 Ընկերությունը կարող է լուծարվել նրա լիցենզիան անվավեր ճանաչելու, ուժը կորցրած ճանաչելու, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, Ընկերության ժողովի որոշմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

16.3 Ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Ընկերության լուծարման մասին, եթե Ընկերությունն ի վիճակի է բավարարելու իր պարտատերերի պահանջները: